ՀԱՍՏԱՏՎԱԾ է

Խ.Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի արհեստակցական կազմակերպության համաժողովի կողմից <<5>> հունիսի 2012թ.

ՆԱԽԱԳԱՀ ---------- Հ.ՍԱՐԳՍՅԱՆ

ԳՐԱՆՑՎԱԾ է

Հայաստանի Հանրապետության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի վարչության կողմից 07.01.2002թ. գրանցման թիվ 211.190.00407

Վկայական թիվ 03Ա053121

հարկ վճարողի հաշվառման համար 02560376

11.09.2007թ. գրանցված կանոնադրության թիվ 002-3 փոփոխությունը գրանցված է իրավաբանական անձանց պետական ռեգիստրի կենտրոնական մարմնի կողմից <<20>> 07.2012թ.

պետական ռեգիստրի ղեկավար---- Ա.ԳԵՎՈՐԳՅԱՆ

‘Կ Ա Ն Ո Ն Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Խ.ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԱՐՀԵՍՏԱԿՑԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

(փոփոխություն և լրացում)

2012թ.

ԳԼՈՒԽ 1

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

ՀՈԴՎԱԾ 1.

Կազմակերպության անվանումն է՝

Խ.Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի արհեստակցական կազմակերպություն:

ՀՈԴՎԱԾ 2.

Կազմակերպության գտնվելու վայրն է՝ Հայաստանի Հանրապետություն, ք.Երևան,0010, Խանջյան 5, 1-ին հ., սենյակ 103, հեռ. 59-70-57:

ՀՈԴՎԱԾ 3.

Խ.Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի (ՀՊՄՀ) արհեստակցական կազմակերպությունը (այսուհետև կազմակերպություն) համալսարանի աշխատողների կամավոր միավորում է, որը ստեղծվում է նրանց գործունեությունը համակարգելու, աշխատողների աշխատանքային ու դրա հետ կապված սոցիալական և այլ շահերն ու իրավունքները ներկայացնելու և պաշտպանելու համար:

ՀՈԴՎԱԾ 4.

Կազմակերպությունն անկախ է պետական, տեղական ինքնակառավարման մարմիններից,գործատուներից, այլ կազմակերպություններից և կուսակցություններից: Նրանց հաշվետու չէ և նրանց կողմից վերահսկողության ենթակա չէ, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:

ՀՈԴՎԱԾ 5.

Կազմակերպությունը համագործակցում է այլ արհմիութենական կազմակերպությունների, միավորումների և դաշնությունների, պետական և տնտեսական մարմինների, հասարակական կազմակերպությունների, ինչպես նաև միջազգային արհեստակցական միությունների և այլ հասարակական միավորումների հետ:

ՀՈԴՎԱԾ 6.

Կազմակերպությունն իր գործունեությունն իրականացնում է Հայաստանի Հանրապետության սահմանադրության, գործող օրենքներին և սույն կանոնադրությանը համապատասխան:

ՀՈԴՎԱԾ 7.

Կազմակերպությունը կարգավորում է իր հարաբերությունները համալսարանի ռեկտորատի (այսուհետև գործատու) հետ կոլեկտիվ պայմանագրով, առաջնորդվելով ՀՀ գործող օրենքներով:

ՀՈԴՎԱԾ 8.

Կազմակերպությունը ինքնուրույն է որոշում իր կառուցվածքը,ընտրում ղեկավար և վերահսկող մարմիններ, հրավիրում համաժողովներ և ղեկավար այլ մարմինների նիստեր, ստեղծում աշխատակազմ, կազմակերպում նրա աշխատանքը և վարում ինքնուրույն կադրային քաղաքականություն:

ՀՈԴՎԱԾ 9.

Կազմակերպության իրավունակությունը ծագում է նրա պետական գրանցման պահից: Կազմակերպությունը հանդիսանում է իրավաբանական անձ, ունի իր կնիքը հայերեն,ռուսերեն,անգլերեն լեզուներով, դրոշմը և հաշիվը բանկում: Արհեստակցական կազմակերպության գրանցումը իրականացվում է սահմանված կարգով:

ԳԼՈՒԽ 2

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆ, ՆՊԱՏԱԿՆԵՐԸ, ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ, ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՀՈԴՎԱԾ 10.

Կազմակերպության նպատակները.

Ներկայացնում և պաշտպանում է արհեստակցական կազմակերպության անդամի աշխատանքային ու դրա հետ կապված սոցիալական ու այլ շահերը և իրավունքները գործատուի կամ երրորդ անձի մոտ,

գործատուի հրավերով մասնակցում է արտադրական ծրագրերի մշակմանը և դրանց կենսագործմանը,

գործատուին ներկայացնում է առաջարկություններ աշխատողների աշխատանքի և հանգստի պայմանների բարելավման, նոր տեխնիկայի ներդրման, ուսումնական գործընթացի,

աշխատանքի վարձատրության չափի և կարգի վերաբերյալ,

գործատուի հետ համագործակցում է կազմակերպության անդամի պարգևատրման և խրախուսման հարցերում,

գործատուի ներկայացմամբ քննարկում է աշխատանքային կարգապահության խախտում թույլ տված կազմակերպության անդամի հարցը:

ՀՈԴՎԱԾ 11.

Կազմակերպության իրավունքները.

Կազմակերպությունն ի դեմս իր ղեկավար մարմնի կամ ներկայացուցչի կնքում (վերակնքում) է պայմանագիր գործատուի հետ համաձայն արհմիությունների մասին օրենքի 16 հոդվածի,

ՀՀ օրենսդրությանը համապատասխան վերահսկում է գործատուի կողմից աշխատանքային օրենսդրության և աշխատանքի պաշտպանության կանոնների պահպանումը,

մշակում և իրականացնում է քաղաքացիների առողջարանային բուժման և հանգստի կազմակերպման, զբոսաշրջիկության և մարզական միջոցառումների ծրագրեր,

կազմակերպում և իրականացնում է ակումբային աշխատանքներ, փառատոններ, մրցումներ:

Ըստ ՀՀ օրենսդրության այցելում է այն աշխատատեղերը, որտեղ աշխատում են տվյալ կազմակերպության անդամները:

Աշխատատեղում, աշխատանքի պայմանների հետ կապված աշխատողի կյանքին և առողջությանը վտանգ սպառնացող իրադրություն ի հայտ գալու դեպքում կազմակերպությունը միջնորդագրով պահանջում է միջոցներ ձեռնարկել ի հայտ եկած վտանգը վերացնելու կամ մինչ այդ աշխատանքն այդ աշխատատեղում դադարեցնելու համար,

ի պատասխան միջնորդագրի գործատուն պարտավոր է ՀՀ օրենսդրությամբ սահմանված ժամկետում կազմակերպությանը տեղյակ պահել ձեռնարկած միջոցառումների մասին:

Կազմակերպությունն իր կանոնադրական խնդիրները իրագործելու նպատակով ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով տեղական ինքնակառավարման մարմիններից, գործատուից ստանում է ծառայողական, առևտրային կամ բանկային գաղտնիք չհամարվող տեղեկություններ:

Կազմակերպությունը լուսաբանում է իր գործունեությունը զանգվածային լրատվության միջոցներով:

Կազմակերպությունը անդամների իրավունքներն ու շահերը պաշտպանելու նպատակով իրավասու է միջնորդագրով դիմել պետական, տեղական ինքնակառավարման մարմիններին, գործատուին կամ այլ անձանց, ինչպես նաև օրենքով սահմանված կարգով բողոքարկել նրանց գործողությունները (անգործությունը):

Կազմակերպությունը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով անհրաժեշտության դեպքում կարող է կազմակերպել և անցկացնել խաղաղ ժողովներ, հանրահավաքներ, ցույցեր, երթեր, այլ միջոցառումներ, դրանց հետ կապված բանակցություններ վարել պետական, տեղական ինքնակառավարման մարմինների, գործատուների, այլ կազմակերպությունների, նրանց պաշտոնական անձանց հետ:

ՀՈԴՎԱԾ 12.

Իրավասությունների ժամկետը լրանալուց հետո իրենց պաշտոններում չվերընտրվելու դեպքում ՀՀ աշխատանքային օրենսդրության համապատասխան արհկոմի նախագահն ու նրա տեղակալը ունեն նախկին աշխատանքում վերականգնվելու կամ նրան համարժեք աշխատանքի երաշխիք:

ԳԼՈՒԽ 3

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ, ՂԵԿԱՎԱՐ ԵՎ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԿԱԶՄԱՎՈՐՄԱՆ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ, ՆՐԱՆՑ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ



ՀՈԴՎԱԾ 13.

Արհեստակցական կազմակերպության բարձրագույն մարմինը համաժողովն է, որը հրավիրվում է ներկայացուցչական սկզբունքով 5 (հինգ) տարին մեկ: Համաժողովի ներկայացուցչական նորմը հաստատում է արհկոմիտեն: Համաժողովը համարվում է օրինական, եթե նրա աշխատանքներին մասնակցում է ընտրված պատգամավորների կեսից ավելին, համաժողովի որոշումներն ընդունվում են մասնակիցների ձայների պարզ մեծամասնությամբ: Համաժողովի հրավիրման ժամկետը և օրակարգը հաստատում է արհկոմիտեն և այդ մասին տեղեկացնում հրավիրման օրվանից առնվազն 3 (երեք) շաբաթ առաջ:

ՀՈԴՎԱԾ 14.

Համաժողովն ունի գործունեության ցանկացած հարցի վերջնական լուծման իրավունք: Նրա բացառիկ իրավասությունն է.

Կազմակերպության կանոնադրության հաստատումը, փոփոխություններ և լրացումներ կատարելը,

Կազմակերպության ղեկավար և վերահսկողություն իրականացնող մարմինների ընտրությունը,

Կազմակերպության վերակազմակերպման և լուծարման մասին որոշումների ընդունումը:

ՀՈԴՎԱԾ 15.

Բացառիկ դեպքերում արտահերթ համաժողով կարող է հրավիրվել արհեստակցական կոմիտեի որոշմամբ կամ ստորաբաժանումների կեսից ավելիի պահանջով:

ՀՈԴՎԱԾ 16.

Համաժողովը լսում է և գնահատում արհկոմի հաշվետվությունը՝ համաժողովների միջև ընկած ժամանակաշրջանում նրա գործունեության մասին,

Լսում և գնահատում է վերստուգիչ հանձնաժողովի հաշվետվությունը,

Ճանաչում է ստորաբաժանումների կողմից առաջադրված այն ներկայացուցիչների լիազորությունները, որոնք ընդգրկվելու են համալսարանի արհկոմի կազմում, ընտրում արհկոմիտե:

- Ընտրում է վերստուգիչ հանձնաժողով,
- Որոշում է ընդունում անհրաժեշտ հանձնախմբերի մասին,
- Սահմանում է անդամավճարի չափը և վճարման կարգը,
- Հանձնարարականներ է տալիս արհկոմիտեին:

ՀՈԴՎԱԾ 17.

Վերահսկողություն իրականացնող մարմինը վերստուգիչ հանձնաժողովն է, որի լիազորությունների ժամկետը 5 (հինգ) տարի է:

Վերստուգիչ հանձնաժողովը ընտրվում է համաժողովում:

Վերստուգիչ հանձնաժողովը հավաքվում է ոչ ուշ, քան 3 ամիսը մեկ:

Վերստուգիչ հանձնաժողովի որոշումները համարվում են ընդունված, եթե նրա օգտին քվեարկել են նիստի ներկաների պարզ մեծամասնությունը:

Վերստուգիչ հանձնաժողովը հաշվետու է համաժողովին, նա ստուգում է արհկոմի ֆինանսական ու ընթացիկ գործունեությունը և անհրաժեշտության դեպքում տեղեկանք է ներկայացնում արհկոմիտեի քննարկմանը:

ՀՈԴՎԱԾ 18.

Համաժողովների միջև ընկած ժամանակահատվածում կազմակերպության ղեկավար մարմինը արհկոմն է, որն ընտրվում է համաժողովում 5 (հինգ) տարի ժամկետով և համաժողովների միջև ընկած ժամանակահատվածում ղեկավարում և կոորդինացնում է կազմակերպության գործունեությունը, իրագործում համաժողովի որոշումները:

Արհկոմը կազմավորվում է ներկայացուցչական սկզբունքով, առանձնացված ստորաբաժանումների կողմից ներկայացված ներկայացուցիչներից:

Որոշումներ է ընդունում իր լիազորությունների շրջանակներում գտնվող բոլոր հարցերի վերաբերյալ, կնքում կոլեկտիվ պայմանագիր գործատուի հետ:

Ընտրում է հանձնախմբերի նախագահներ, հաստատում հանձնախմբերի գործունեության ծրագրերը:

Հետևում է համաժողովի և իր կողմից ընդունված որոշումների կատարմանը:

Տնօրինում է կազմակերպության միջոցները:

Հաշվետու է համաժողովին:

Արիկոմն իր կազմից ընտրում է նախագահ, նրա ներկայացմամբ տեղակալ, հանդես է գալիս կազմակերպության անունից:

Արիկոմը նիստերը գումարում է ըստ անհրաժեշտության, բայց ոչ ուշ, քան ամիսը մեկ անգամ:

Արիկոմի նախագահը կամ տեղակալը վարում են արիկոմի նիստերը, ստորագրում ընդունված փաստաթղթերը, ներկայացնում կազմակերպությանը:

Արիկոմի որոշումները համարվում են ընդունված,եթե կողմ է քվեարկել անդամների կեսից ավելին, պարզ մեծամասնության ներկայության դեպքում:

ՀՈԴՎԱԾ 19.

Կազմակերպությունը կարող է ունենալ իր առանձնացված ստորաբաժանումները, որոնք ստեղծվում են արիկոմի որոշմամբ և որոնց կանոնադրությունը հաստատում է արիկոմիտեն:

ԳԼՈՒԽ 4

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄ ԴԱՌՆԱԼՈՒ ԵՎ ԱՆԴԱՄԱԿՑՈՒԹՅՈՒՆԻՑ ԴՈՒՐՍ ԳԱԼՈՒ ԿԱՐԳԸ

ՀՈԴՎԱԾ 20.

Կազմակերպության անդամ կարող է լինել ՀՊՄՀ-ի յուրաքանչյուր աշխատող, որն ընդունում է կազմակերպության կանոնադրությունը, մուծում է մուտքի վճար և անդամավճար:

Կազմակերպության անդամ լինելը հիմնվում է կամավորության ակզբունքի վրա:

ՀՈԴՎԱԾ 21.

Ընդունելությունը (ազատումը) կազմակերպությունից կատարվում է ընդունվողի (ազատվողի) դիմումի համաձայն, արիկոմի որոշմամբ:

Կանոնադրության հիմնական սկզբունքների խախտման դեպքում կազմակերպության անդամը կարող է ենթարկվել կարգապահական տույժերի, ընդհուպ մինչև հեռացում:

ԳԼՈՒԽ 5

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՀՈԴՎԱԾ 22.

Կազմակերպության անդամն իրավունք ունի.

ընտրելու և ընտրվելու կազմակերպության ղեկավար մարմիններում,

կազմակերպության մարմիններում և ժողովներում, արիկոմի նիստերում ազատ արտահայտել և պաշտպանել իր կարծիքը, առաջարկություններով հանդես գալ և պաշտպանել այն մինչև որոշում կայացնելը,

կատարել առաջարկություններ, քննադատել կազմակերպության մարմինների աշխատանքներում եղած թերությունները,

ստանալ կազմակերպության մարմինների գործունեության մասին ցանկացած տեղեկություն,

դիմել կազմակերպությանը պաշտպանելու իրավական և սոցիալ-տնտեսական շահերը պետական, տնտեսական, իրավական մարմիններում,

մասնակցել կազմակերպության այն ժողովներին, համաժողովներին, արիկոմի նիստերին, երբ քննարկվում է իր գործունեությունը կամ վարքագիծը,

օգտվելու կազմակերպության ունեցվածքից և նյութական միջոցներից ըստ սահմանված կարգի:

ՀՈԴՎԱԾ 23.

Կազմակերպության անդամը պարտավոր է.

կատարել կազմակերպության կանոնադրության պահանջները և իր գործունեությամբ նպաստել ծրագրերի իրականացմանը,

աջակցել կազմակերպության մարմինների որոշումների իրականացմանը,

հաճախել կազմակերպության ժողովներին և կատարել անդամավճարի ամենամսյա մուծումներ:

ԳԼՈՒԽ 6

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԼՈՒԾԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

ՀՈԴՎԱԾ 24.

Արհեստակցական կազմակերպության վերակազմակերպումը (միաձուլումը, միացումը, բաժանումը, առանձնացումը) իրականացվում է կազմակերպության բարձրագույն մարմնի՝ համաժողովի որոշմամբ, օրենքով սահմանված կարգով:

ՀՈԴՎԱԾ 25.

Արհեստակցական կազմակերպության լուծարումը տեղի է ունենում համաժողովի որոշմամբ և օրենքով սահմանված կարգով:

ԳԼՈՒԽ 7

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԿԱՐԳԸ

ՀՈԴՎԱԾ 26.

Համաժողովի բացառիկ իրավասությունն է.

կազմակերպության կանոնադրության մեջ փոփոխություններ և լրացումներ կատարել,

կազմակերպության կանոնադրության մեջ փոփոխությունները և լրացումները իրավունակ են դառնում նրա պետական գրանցման պահից:

ԳԼՈՒԽ 8

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԴՐԱ ՏՆՕՐԻՆՄԱՆ ԿԱՐԳԸ, ՄՈՒՏՔԻ ՎՃԱՐՆԵՐԻ, ԱՆԴԱՄԱՎՃԱՐՆԵՐԻ ՉԱՓԸ, ՄՈՒԾՈՒՄՆԵՐԻ ԿԱՐԳԸ, ԳՈՒՅՔԻ ՁԵՌՔ ԲԵՐՄԱՆ ԱՅԼ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ

ՀՈԴՎԱԾ 27.

Կազմակերպության սեփականությունը գոյանում է մուտքի վճարներից, անդամավճարներից, կամավոր ներդրումներից, նվիրատվություններից, ՀՀ օրենսդրությամբ չարգելված այլ աղբյուրներից (շահույթ չհետապնդող կոմերցիոն և այլ գործունեությունից):

Մուտքի վճարի չափը սահմանվում է աշխատավարձի 2%-ի չափով:

Անդամավճարի չափը սահմանվում է աշխատավարձի 1%-ի չափով:

Գանձումը կատարվում է կենտրոնացված ձևով կոլեկտիվ պայմանագրի համաձայն:

Գործատուն կոլեկտիվ պայմանագրին համապատասխան, կազմակերպությանը տրամադրում է ֆինանսական միջոցներ, գույք, աշխատողների աշխատանքի և հանգստի պայմանների բարելավմանը, ինչպես նաև նրանց առողջության պահպանմանը նպատակաուղղված միջոցառումներ կազմակերպելու համար:

ՀՈԴՎԱԾ 28.

Արհկոմիտեն տիրապետում, օգտագործում և տնօրինում է իր սեփականությունը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով: Կազմակերպությունն իր սեփականության միջոցներից ծախսեր է կատարում աշխատողների նյութական օգնության, խրախուսման, միջոցառումների իրականացման, արհկոմի ազատված աշխատողներին աշխատավարձ վճարելու և համաժողովի որոշմամբ այլ ծախսեր կատարելու նպատակով:

ՀՈԴՎԱԾ 29.

Արհկոմիտեն յուրաքանչյուր օրացուցային տարվա վերջում, 3 ամսվա ընթացքում ներկայացնում է իր սեփականության օգտագործման հաշվետվություն,վերստուգիչ հանձնաժողովի ստուգումների ակտի հետ միասին, արհկոմի նիստում:

ԳԼՈՒԽ 9

ՀԵՏԿԱՆՉԻ ՄԵԽԱՆԻԶՄԸ

ՀՈԴՎԱԾ 30.

Արհկոմի նախագահին արհկոմի կամ ստորաբաժանումների 2/3 կողմից անվստահություն հայտնելու դեպքում հրավիրվում է արհկոմի նիստ, որտեղ դրվում է նրան այդ պաշտոնից ազատելու հարցը:

ՀՈԴՎԱԾ 31.

Արհկոմի անդամին նրան առաջադրած ստորաբաժանման 2/3 կողմից անվստահություն հայտնելու դեպքում հրավիրվում է արտահերթ ժողով, որտեղ դրվում է նրան հետ կանչելու հարցը: